Լեոնիդ Ենգիբարյան

Կատուն

Գծավոր պոչով կատուն ասաց Մեծն Աստվածուհուն .

-Խնդրում եմ, շատ եմ խնդրում, Մեծն Աստվածուհի, դու ամեն ինչ կարող ես, ինձ կի՛ն դարձրու: Ես այնպե՜ս եմ դա ուզում:

Եւ Մեծն Աստվածուհին ասաց .

-Դա անելը բարդ չէ, բարդը սիրելն է, իսկ կինը, եթե չի կարողանում սիրել, դադարում է կին լինել:

-Ես կսիրեմ, ես կսիրե՜մ,- երդվեց գծավոր պոչով կատուն:

-Լավ,- ասաց Մեծն Աստվածուհին,- մե՜կ, երկու՛, երե՜ք:

Եւ կատուն վերածվեց կնոջ:

Եւ նա սիրեց:

Տղան գեղեցիկ էր ու բարձրահասակ, ուներ շեկ մազեր, որովհետեւ այնքան բարձրահասակ էր, որ գլխով արեւին էր դիպչում:

Եւ տղան էլ կատվին սիրեց:

Բայց երբ նա ցանկացավ աղջկան համբուրել, դժբախտություն պատահեց: Անկյունից մի մուկ հայտնվեց:

Եւ կատուն, մոռանալով, որ ինքն այլեւս կատու չէ, նետվեց մկան վրա ու . . . նորից գծավոր պոչով հասարակ կատվի վերածվեց:

Իսկ տղան, ի՞նչ կարող էր անել տղան: Նա գնաց:

Նա գեղեցիկ էր ու բարձրահասակ, ուներ շեկ մազեր, որովհետեւ այնքան բարձրահասակ էր, որ գլխով արեւին էր դիպչում:

Կատուն շատ երկար լացեց, բայց Մեծն Աստվածուհին անվրդով մնաց: Չէ՞ որ նա նույնպես կին էր: